

ԲԱՇՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա

Տարեկ. 10 ֆր.

Վեցամս. 5 "

Արտասահման

Տարեկ. 12 ֆր.

Վեցամս. 6 "

ԿԱՆԽԻԿ



ՊԵՏԱՆԲ

Գրութիւնք եւ

չեն տրուիր:

Հասցէ

DIRAN

PAPAZIAN

YILDIZ TABIA

VARNA

BULGARIE

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԷՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ 17 ՇԱԲԱԹ 1900

ԹԻԻ 166

ԱՐՀԱԿՈՒՀԻ Յ. ՊՅԵԱՃԵԱՆ


և

ՅԱՐՈՒԹԻՒՆ Պ. ԷՆԿԻՊԱՐԵԱՆ

ՊՍԱԿՈՒԵՑԱՆ

1900 Յունիս 12 Վառնա

ՃԿՈՒՆ ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆՆԵՐ



Բարոյական զօրաւոր նկարագիրն է որ կը ստեղծէ մարդու մէջ որոշ սկզբունքը: Անոնք որ զուրկ են այդ նկարագրէն, զուրկ են նաեւ որոշ սկզբունքի մը ընծին: Դառնում են անհասկնալիքներ:

Նա որ չունի որոշ գիծ մը, որով ղեկավարէ իր անձը թէ՛ հանրային և թէ՛ անհատական գործերու մէջ, նա մէկ կողմէն իր անձին ու իր մերձաւորներուն պատուոյն կը վաւաճանէ եւ միւս կողմէն ալ՝ իր պատկանած համայնքին աղէտաւոր մէկ անդամը կը դառնայ:

Միջին ճամբայ չը կայ. տեսա՞ր որ մէկը այսօր հիւսիս եւ վաղը հարաւ կը փչէ, հետեցո՛ւր անմիջապէս, որ այդ մարդը աննկարագիր մէկն է և հետեւաբար ամենէն վատնաւոր մարդը ընկերային գործերու մէջ: Անիկա՝ երբ օրուան աղբեցութեան տակ՝ յանուն ձկնեղութեան այսօրուան ըսածը վաղը կուրանայ, ոչ միայն ինքզինքը եւ իր գործերը հակասութեան մէջ կը գնէ, այլ եւ բոլոր այն մարդիկը եւ բոլոր այն գործերը, որոնք առնչութիւն ունին իրեն հետ:

ձկնեղութիւնը՝ այն պայմաններուն տակ, որով 'ի գործ կածեն այդպիսի անպատկառ էակներ, ի հարկէ

մասնաւոր դիտումով է և հաշույ տակ: Անոնք մի քանի մեծագոյն սկզբունքներու կռնակ տուած, իրենց կեանքի ուժեղ հիւթը ժողովուրդի արիւնէն կարենալ քաշելու համար, ինքզինքնին կըսեն՝ գաղափարական վսեմ նպատակի մը փառած ցոյց տալով, կսկսին ամեն տեսակ ստույգներու զիջանիլ եւ մասնաւոր երկրորդական խնդիրներու մէջ ամեն օր զիրար ջրող խօսքերով լեցնել հրապարակը, որպէս զի իրենց աղտոտ հաշիւները կարգադրեն օրը օրին: Ա՛յ օրուան պէտքը դիտէ. այդ պէտքը ինչ որ պահանջէ, այն կընեն, ի հարկէ շատ անգամ կատարեալ ապուշութեամբ մոռնալով իրենց երէկուան ըրածը և կամ ըսածը:

Պէտք է գիտնալ որ բարոյական աշխարհի մէջ երբեք տեղ չունի այդ կերպով ըմբռնուած ձկնեղութիւնը, որ պարզապէս անբարոյականութիւն է, և ան մարդը՝ որ նոյն իսկ երկրորդական համարուած գործի կամ խօսքի մէջ չը հետեւիր ուղղամտութեան պահանջած որոշ սկզբունքի մը գծին, կատարեալ անբարոյական է և իր ամեն գաւառներուն անհատաբար, միայն կըստ պատէ. յարմար տեսնի մը, որ մինչեւ անգամ դաւաճանէ իր իբր թէ պաշտած ամենէն մեծ ու ամենէն վըսեմ սկզբունքին ալ (*):

(*) Է՛, շատ լաւ, երբ հրապարակագիր մը ելաւ մէկ օր թերթերու մէջ «ես երբեք դատի չեմ դիմի» ըսաւ ու այսօր ալ «ես դատի կը դիմեմ» կըսէ ու նոյն իսկ իր յարգած մէկ վսեմ գաղափարին հետ ուղղակի առնչութիւն ունեցող խնդիրները օտար դատարաններու առջեւ քաջքշել կ'սպառնայ, այս պարզ և անմեղ(??) ստախոսութեան ալ ձկնեղութեան անունը չպիտի տանք, Պ. Ծանօթ, եւ պիտի դատապարտե՞նք զինքը իբր հրապարակային ստախոս եւ հետեւաբար անբարոյական...

Ծ. Խ.

Ան՝ որ տասը փարսյի համար գող է, գող է նաև հազարներու համար ալ. ան՝ որ տուն գացի եկալի համար նպաստաւոր սուտ մը կը խօսի, կատարեալ անբարոյական մըն է, որ կրնայ ամենէն վսեմ գործերու համար ալ ստեղ և զանոնք վտանգել իր ցած նպատակներուն համար, յարմար առիթը ներկայանալուն պէս.

Ուստի այսօր բարեկամ, վաղը թշնամի ներկայացող, և այսօր քորեալ վաղը յօժու մարգիկներէն սոսկացի՛ր այնքան, որքան կը սոսկաս հրացան ի ձեռին ճամբար սպասող քու յայտնի թշնամիէդ և գիտցիր որ ատանկներ ընդունակ են ամեն ստորնութեան ալ:

Այն է եկեր այն ժողովուրդին որ ատանկ ղեկավարներու կը հանդպի:

ԾԱՆՕԹ

Տպագրական նոր օրինաց ուժով հարկ եղած էր մեր Յարգելի պատասխանատու Տիար Զգօնեանի տեղ ուրիշ մը դրնել:

Հակառակ մէկ քանի փողոցային ողորմելիներու ճիգերուն, շնորհիւ մեր բազմաթիւ համակրողաց «Հայելի» այսօր կը հրատարակուի նախկին Գաղաքապետ Յարգելի Տիար Ժ. Ժէ. քֆի պատասխանատուութեան ներքե:

Կուգանք այս առթիւ մեր հրապարակային ջերմագին շնորհակալութիւնը յայտնել թէ մեր նոր պատասխանատուին և մեր այն ազնիւ բարեկամներուն որոնց համակրանքը թանկագին դրուական մըն է մեզ համար:

ԱԶԳԱՅԻՆ

65,000 ՖՐԱՆՔԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՄԸ

Բուզաղիանի կառկը տակաւին չմոցուած, կարեւոր նուիրատուութեան լուր մըն ալ կը հասնի մեզ: Կալիթայի (Հնդկաստան) Արգարեանց հռչակաւոր առեւտրական տան արդի ներկայացուցիչները 26,000 բուլի (ժողովրդային 65,000 ֆր.) յանձնեցին և շնորհատանի կառավարութեան աւանդապահին, հարկերին $3\frac{1}{2}$ տոկոսով, իբր մշտնջենական աւանդ մը իրենց ընտանիքին յիշատակին: Այդ գումարին տարեկան տոկոսը երեք հաւասար մասերու բաժնուելով, մէկ մասը պիտի տրուի Կալիթայի Հայ աղքատներուն և վիճակաւոր քահանաներուն, մէկ մասը Նոր-Ջուղայի աղքատներուն ու մէկ մասն ալ տեղւոյն Ս. Աստուածածին եկեղեցիին:

— Լոնտոնի Հայ գաղութը՝ հանգուցեալ տիկին Վլաւմիլի գաղաղին նուիրել է հիանալի ծածկոց մը. դա՛կաղը այդ ծածկոցով տարուած է մինչեւ Ուէսթմինսթերի եկեղեցին: Հանգուցեալին պարագաները այս տոթիւ մասնաւոր շնորհակալութիւն յայտնած են Հայ գաղութին:

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Կարգալով «Շարժում»ի 233 թիւին մէջ մասնաճիւղիս ուղղեալ Պ. Արվախիի նամակը, կուզենք մեր կողմանէ պատասխանել ժողովուրդին:

Մասնաճիւղս մէկ տարուան շրջանին մէջ իր ունեցած խումբերէն բաժնեդին ու նուէրներ հաւաքած է 142 ֆր. 40 սնթ:

Իսկ մասնաճիւղիս միջոցաւ կազմուած վի. ճակահանութեան հաշար (1000) տոմսակները (ուրոյ՝ իւրաքանչիւրը մէյմէկ ֆրանք կարժէ) ծախուած են մեր եւ կոմիտէի միջոցաւ, որոնցմէ 276 ֆր. միայն ստացած ենք: (Մնացեալ 724 ֆրանքը կոմիտէին քով կը գտնուի ըսել է. Մ. Խ.)

Մասնաճիւղիս միջոցաւ կազմուած նուագահանդէսի տոմսակներու վաճառումը (ինչպէս մեր նախորդ նամակաւ ըսած էինք) կոմիտէի անդամներու ձեռքով ըլլալուն, սպառած տոմսակներու քանակութեան վրայ տեղեկութիւն չունինք: Այդ նուագահանդէսէն հաշիւ մը միայն ներկայացուցած են եւ մեզ յանձնած 159 ֆր. 60 սնթ. որմէ հանելով եղած ծախսը զուտ հասոյթը մնացած է 97 ֆր. 30 սնթ: (*)

Պ. Արվախիի եւ Պ. Գալազատէի յանձնած ենք 507 ֆր. 50 սնթ. որոյ համար ստացած ենք ընկալադիրներ:

Ահա մասնաճիւղս համառօտ կերպով իր հաշիւներ պարզելէ վերջը այդ հաշիւներու մանրամասնութիւնը պատրաստ է ներկայացնել երբ հարկ տեսնուի: Միայն թէ մասնաճիւղս կուզայ նորէն

(*) Սոյէտինէնիյէի մեծ սրահին մէջ տրուած նոյն նուագահանդէսին համար պէտք եղած յայտագիրը ու տոմսակները այն ատեն մեր ձեռքով տպագրել տուին Պ. Գ. Սէտտուածեան եւ Պ. Յ. Քիւչիւկեան, անդամք նուագահանդէսի համար կազմուած մասնախմբին, հետեւեալ կերպով.

300 օրինակ յայտագիր.

80 Տոմս Ա. կարգ 4 ֆրանքնոց.

70 " Բ. կարգ 3 "

100 " Գ. կարգ 2 "

120 " Դ. կարգ 1 "

Կոմիտէ մը, նուագահանդէսի համար կազմուած մասնախումբ մը եւ տիկնանց մասնաճիւղ մը ձեռք ձեռքի տալով շարքաթներ առաջ ապին անդին կիյնան, տուններ ու խանութներ կայցելն ու տպագրուած այդ 850 ֆրանքնոց տոմսակներէն միմիայն 159 ֆրանքի տոմսակ կը ծախեն: ... Այս հաշիւին մէջն է նաև նոյն գիշերը թատրոնին դուռը ծախուած տոմսակներու փոխարժէքը եւ բացէն նուէրները: Ծ. Խ.

Բոժ.— Հոգիդ սիրեմ՝ սիրելի ընթերցող. շիտակ ըսէ՛, ուղղութիւնը, — խըվողովքը չի հասկնաս հա՛յ իւրաքանչիւ պէս չի՞ փայլիւր կոր սա հաշիւին մէջ:

չեղանկ այն հարցը թէ, մեր յանձնած վերոյիշեալ գումարներ ի՞նչու չի հրատարակուեցաւ «Իրօջակ»ի մէջ, հակառակ մեզ տրուած պաշտօնական նամակներով եղած խոստմանց:

Իսկ գալով մեր հրատարման պատճառին շատ պարզ է հասկնալ, քանի որ մեր գրամներ չի հրատարակուեցան «Իրօջակ»ի մէջ եւ մեր նուիրատուները կը պահանջէին ու մենք ու մենք պատասխանատու էինք, քանի որ միեւնոյն ժամանակ Պաշտակցութեան Վառնայի խմբագրութեան ալ իրենց պաշտօնական նամակով մնչ կիմացնէին իրենց գրամներու նպատակէն շեղիչ ու պիտօն չի հասնէր. հետեւեալ մեր կատարածները կրթկնապատկուելով, վերջին անգամ մըն ալ գիմուս ըրինք եւ տեսնելով մեր պահանջներուն բաւարարութիւն չտրուիլը, աւելի լու համարեցինք զօրծէ քաշուիլ քան թէ պատասխանատու մնալ:

Ահա մեր վերջին պատասխանը:

Հրատարեալ սիկնանց մասնագիր

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

ՅԵՐԵԿԱՅԹ

Ի ՆՊԱՍՏ ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒՆ

Բարեգէն յունիս 16 (բ. ե.) թուականու մեզ կը գըրեն. — Երէկ տեղի ունեցաւ Տ. Չոպանեանի կազմակերպած ցերեկայթի (մաթինէ) ի նպատակ շայտատանի որբերուն: Յայտագիրը խիստ ճօն էր: Բարեգի գրեթէ ամբողջ արուեստագէտները ի մի հաւաքուած էին: Ցերեկայթի որ կը գտնուէր Տաէֆիսի գաւառ պաշտպանոյ Պ. Լիկի հովանաւորութեան ներքի, տեղի ունեցաւ Վասիլի թատրոնին մէջ: Բ. խօսողն էր Պ. Անթով ֆըրանս կաճառորդը, որ շատ յուզեալ շեշտերով նկարագրեց շայտատանի ջարդը եւ անկէ յառաջ եկած թըշուառութիւնը, որուն մէկ մասը արգէն երեք օր առաջ հրատարակուած էր Թիկարոյի մէջ: Վերջին խօսողը եղաւ Տ. Չոպանեան որ շնորհակալութիւն յայտնեց ներկայից շայ որբերուն պատառ մը հաց տուած ըլլալուն համար: Ներկայք գոհ տրտով մեկնեցան, վասն զի արանջիկ ցերեկայթի մը ներկայ գտնուած էին: Շատ մը հայեր թէեւ բացակայ էին ցորեկ ըլլալուն համար, բայց քաջայայտ ենք թէ իրենց զրկուած տոմսերը մերժած չեն:

Այսօրուան Թանի մէջ կարգացիք թէ ֆրանսացի մը զգածուելով Պ. Անթով ֆրանսի բանախօսութենէն, 500 ֆր. զրկած է նոյն խմբագրութեան, ի նպատակ շայ որբերուն:

ԱՐԳՈՍ

— Ֆիլիպէն ալ կը գրեն մեզ. «Անցեալ շաբաթ, յունիս 3ին, տեղւոյս պատճական դատարանին մէջ տեսնուեցաւ Արմենականաց եւ Պաշտակցականաց միջե տեղի ունեցած ընդհարումի ծանօթ գէպքին գատավարութիւնը:

Գատարանը՝ երկու կողմի վկաները լսելէ ետքը իր վճիռը արձակեց, որով Պաշտակցականներէ թաթուլ 3 ամուռն ու իր 7 ընկերներն ալ մէյմէկ ամիս բանտարկութեան եւ գատական ծախքերը վճարել շատապարտուեցան:

— Վառնայի Լզգ. երկսեռ վարժարանաց տարեկան հրապարակային հարցաքննութիւնը սկսած են յունիս 11էն եւ պիտի տեսն մինչե յունիս 25: Իսկ Հայկական գիշերօթիկ վարժարանին Բ. շրջանի հրապարակային քննութիւնը պիտի սկսին վաղը (յունիս 18) եւ պիտի տեսն մինչե 25:

ԲԱՅ ՆԱՄԱԿ

ՏԻԿՆԱՆՑ ՄԱՍՆԱԽՄԻՆ

Անիրաւ էր: Վասն զի ձեր գործառնութեանց համարը շայ ժողովուրդին ներկայացուցած տաննիդ՝ խաբէսուբէսական օրէնքի որոշ տրամագրութիւնները ոտնակոխ ըրիք. ու փոխանակ ժողովուրդը մութի մէջ շըւարեցնելու համար բեյու թէ «Ենքը գրամները յանձնեցինք Պ. Զեոս Արֆրէանի», յանգրնեցաք պատուաւոր մարգկանց օրինակին հետեւելով ձեզ յանձնուած ընկալագիրները ստորագրողին անունը տալ: Միթէ չէիք գիտեր որ այդ ստորագրութիւնները պարզապէս ձեւակերպութեան համար տրուած էր՝ ձեր ձեռքէն գրամները գանձելու համար, եւ թէ անոնք պէտք էին կրտուած ըլլալ կամ յաւիտեան հրապարակ չի գալ: Զէիք գիտեր թէ բրէական յանցանք մըն էր անդիմը սանդիմն հաշիւ տալը: Զէիք գիտեր կրտմ. թէ գողութիւնը մեղք չէ, բայց զայն հրապարակելը ահալի պաւաճանութիւն է: Ի՞նչ ամպարչտութիւն, երեւ անունը տալ տիեզերաստան եւ գաճալանջ այն յեղափոխականին(°), որ թուրքիացի շըլլալով, ազատ երկրի մը մէջ ծնած, ու եւրոպեան հոգի պետութեան մը հպատակ՝ ամենեւին վախու տեղ մը չունենալովն հանգերձ, դարձեալ կը վախնայ, կը գողայ ու կը սարսոյ միմիայն իր անունը տրուած ըլլալուն համար: Զէիք գիտեր որ թէեւ ժողովուրդին անունովը հրապարակ եկաք, բայց այդ անձին ուղած ձեւովը հաշիւ չտալուդ համար պաւաճանի մրցանակին պիտի արժանանայիք: Դուք տիկնանց մասնախուսմը, ձեր այդ օրինաւոր յայտարարութեամբը մեծ փնտ հասուցիք Ս. գործին, որովհետեւ արգելք ու խոչնդոտ եղաք աւանկ անվախ ու ահոս գաճառարտիկի մը՝ որ իր պարթեւ հասակովը յատկապէս պատրաստուած Յ մէգրօ հրացանը ուսը գարկած պիտի արշաւէր ի խանասոր... երազին մէջ, ջարդուբուրդ հանելու համար թշնամի... քիւրէներուն բանակը եւ Շարաֆ պէյի միւս տկանջին ֆիդայասը յական մեծ խնձոյքին նախագահելու...:

ԲՈԺՈԺԻԿ

ԶԱՆԱԶԱՆՔ



Կնոջական Յուրահանդէս

Կանանց Յուրահանդէսին բացումը մեծ հանգիստով տեղի ունեցաւ Լոնտոնի մէջ: Քաղաքապետութիւն եւ Լորտ քաղաքապետը կը նախագահէին հանդէսին: Ներկայ էին Լոնտոնեան բարձրաստիճան անձնաւորութիւնք, ամենքն ալ պաշտօնական համազգեստով: Շատ հետաքրքրաշարժ էր սոյն Յուրահանդէս. ուր սգեղ սեռին վերաբերող պաշտօնեայ մը անգամ չկար: Ամենքն ալ կիներ էին. կրնաք երեւակայել թէ ինչ տպաւորութիւն կը գործէր այս տեսարանն այցելուին վրայ: Կիներն արգէն, ինչպէս գիտէք հաղուիլ սքուիլ եւ ինքզինքնին ցուցնել այնչափ շատ կը սիրեն, ուստի Յուրահանդէսն աւելի փառաւոր զգեստներու, անստգիւտ արդուզարդերու ցուցահանդէս մըն էր որ աչքի կը զարնէր: Կիշէներուն ետեւ կիներ, հաշուեանդաններուն առջեւ կիներ, դռներու առջեւ կիներ, փոքրիկ թատրոնին բեմին վրայ կիներ, նուազախմբին մէջ կիներ, վերջապէս ամենուրեք կիներ, գրաւիչ դէմքերով եւ շնորհալի շարժումներով: Անոնք աշխարհի բոլոր աղգերէն իրենց ներկայացուցիչներն ունին հոն, Մակաուորի, Աւստրալիոյ եւ Սենեկալի բնիկներէն սկսեալ մինչեւ Եւրոպայի է՛ն նազելաշուք կիներ: Ուշագոյտութեան արժանի պարագայ մը եթէ կայ, այն է որ Եւրոպացի կիներն ամէնն ալ սիրուն, ամէնն ալ գրաւիչ են, կարծես թէ իրենց տեսակին մէջէն է՛ն գեղանիներն են որ ընտրուած են եւ այս իրենց օտարազգի քոյրերուն նախանձը կը շարժէ: Պաշարին Անգլիացիներն անգամ չեն կրնար անտարբեր մնալ հոն ի հանդէս եկած կնոջական հրապարի թաքուն գանձերուն առջեւ եւ սքանչալութիւն մը տպաւորութեան սակ կը մեկնին կ'կին կիներուն թողլով կանանց Յուրահանդէսը:

Հրէշներ

Ակնէն կը գրեն. — «Հրէշներ ծնան ի Բինկեան, մէկը մարդ, միւսը հորթ: Հորթերը զոյգ էին եւ իրենց սրբանին կողմէ իրար փակած: Մէկը միայն ունէր կշիշելու ծակ, միւսը միւր ճամբով մը խողովակ մը ունէր որ կը հաղորդակցէր ընկերոջը ուղիքին հետ: Իսկ հրէշ — մարեն արու էր, կրկին գլուխով, սակայն ինչ որ աւելի տարօրինակն էր, ոսկոր չունէր ոչ գլուխը ոչ ալ թեւերն ու ոտքերը, որք գորտի չորս ոտքերու կը նմանէին իրենց մեծութեամբ, կազմով ու ձեւով: Աչքերուն կոպերը փակած էին յոնքերուն: Այս մարդ — հրէշը 5 ժամ միայն տպրեցաւ:»

Ինքնաշարժ Ներկարար

Դերմանոցի ճարտարագէտ մը յաջողեցաւ շինել ներկարար գործիք մը, որուն շարժիչ զօրութիւնը, աւելորդ է ըսել, կը հայթայթուի ելեկտրական հոսանքով մը: Գործիքն երկու ծակ ունի: Միոյն մէջ կը նետէք աւանդական 10 փարան եւ միւսին մէջ՝ ոտքերնիդ, Խողանակի ուժով հարուածի մը միջոցաւ ճնշեալ օդը ձեր ոտնամանին վրայ կը շոգիացնէ ներկ մը կամ աւելի ճիշտ թեթեւ վերնիճ մը որ վայրկեանապէս կը չորնայ: Գործողութիւնը կը տեսէ ութ երկվայրկեան: Աւելին կայ: Դրամը տուած ատեննիդ, մի քնակաւ ճարտար յօրինուածքի մը շնորհիւ ներկարար գործիքը ձեզ կ'երկնցնէ տպուած թուղթ մը ուրկէ կ'ուսանիք թէ ինչպէս շարժելու էք ոտքերնիդ եւն: Վերջապէս բան մը պակաս չթողելու համար դերման ճարտարագէտը ձայնագիր մնքնայ մը ալ զետեղած է հոն, որ գործողութիւնն աւարտելէ ետք խիստ քաղաքավարութեամբ խօսք կառնէ ու մերսին, կամ մեր բառով, պերէֆեւաք վերսին կը կոխէ: Զմուռնանք ըսել թէ այս ինքնաշարժ գործիք կեղծ գրամ կլլող տեսակներէն չէ:

Նոր Օղապարիկ մը

Փրանսական Ակադեմիայի առջեւ նոր օգտաւարիկ մը յիշատակագիրը կարգացուեր է որոյ հեղինակը հարիւրապետ Ռեպիւրօ օգին մէջ օրերով մնալու պայմաններն ու կարելիութիւնն ունեցող օգտաւարիկի մը շինութեան մանրամասնութիւններուն վրայ կը ճառէ: Հեղինակը ընդհուպ իրականացնելով իր պաշտօնը մտադիր է եղբւր գէպ ի Ափրիկէ ուղեւորութեան մը ձեռնարկել:

ՊՏՈՅՏ

ԲԱՐԻՁԻ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԵՍԻՆ ՄԷՁ

4

Պոլիարական ճաղաւարտ. — Պոլիարական տալաւարը, որ կը գտնուի Ռուսմանիոյ եւ Ֆինլանտիոյ տալաւարոց միջեւ, բիւզանդական սճով սիրուն շէնք մըն է: Առաջին յարկը ուր կը գտնուի արուեստագիտական բաժինը, ընդունելութեան մեծ սրահին մէջ է: Ներկայ ց ուշագործութիւնը կը գրաւեն ցուցափեղկերու մէջ զետեղուած մաս մը թանկագին առարկաներ զորս ֆէրտինանտ իշխանը զրկած է: Ասոնց մէջ կը գտնուի Թըրնովա քաղաքին կողմէ իշխանին նուիրուած շքեղ գաւազան մը, որ Պոլիար հին իշխաններու յատուկ

ցույցերուն հաւատարիմ ընդօրինակութիւնն է: Կայ նաեւ սուտակներով եւ շափիւղաներով զարդարուած բիւզանդական հին պատկեր մը որ կը ներկայացնէ Ս. Պորիս եւ Ս. Կիւրեղ, Պուլկարիոյ պաշտպան երկու սուրբերը, որոց անուանակիրներն են իշխանին երկու զաւակները: Տաղաւարին զանազան մասերուն մէջ ի ցոյց դրուած են տեղական արտադրութիւնները, որոց մէջ մեծ տեղ մը կը բռնէ գորգերը: Վիճակագրական տախտակներու միջոցաւ կը տեսնուի թէ պուլկար վարժարաններու թիւն որ 65 տարի առաջ 300 էր միայն, այսօր 3,000ն անցած է:

Գանձիոյ տաղաւարը որ Բորթուկալի տաղաւարին քովը կը գտնուի, իր գուռները բացաւ հասարակութեան առջև որ հետաքրքրութեամբ դիտեց հոն պարզուող գիւղական տեսարանները: Ամբողջ շէնքը եղենափայտէ շինուած է և պզտիկ աշտարակ մը ունի: Տաղաւարին մէջ այցելուին ցոյց կը տրուի Գանձական ամարանոցի մը ներքին մասը: Ընդունելութեան սրահին մէջ կը գտնուի Քրիստոսի Գ. արձանը, ի մէջ այլոց ցուցադրուած են Քորնելիոսի ճենապակիի գործարանին հիւանալի արտադրութիւնները:

Ռումանիոյ տաղաւարը. — Այս տաղաւարին գետնայարկը ամբողջովին յատկացուած է աղուճուկի (բայա թուրք) որ Ռումանիոյ գլխաւոր հարստութիւններէն մին կը կազմէ: Ուշագրութեան արժանի է երկու մէքր տրամագիծ ունեցող աղի զանգուտ մը որ նոյնպէս աղէ շինուած և մէկ ու կէս մէքր բարձրութեամբ պատուանդանի մը վրայ դրուած է: Առաջին յարկին մէջ ցուցադրուած են զանազան ճարտարութեաններ, ինչպէս նաեւ Ռումանիոյ Ակադեմիայի հրատարակութեանց հաւաքածոն, որ աւելի քան 110 հատոր կը պարունակէ: Կան նաեւ 15-րդ դարու Ռումանական տպագրութեան արտեստի նմոյշներ և վերջապէս հիւանալի ձեռագիր Աւետարան մը զոր Ռումանիոյ թագուհին նուիրած է Արկէշի Մայր եկեղեցիին:

(Շար)

8

Ծ Ի Ծ Ա Ղ

403403ՃԻՆԵՐՈՒՆ ԺՈՂՈՎԱԿԸ

Չորեքշաբթի իրիկուն, ժամը 10ին, գոյ խառնութիւն մը մէջ գումարուեցաւ կոյկոյճիներուն ժողովակը: Ներկայ էին Անժոտենց Դարտակափոր ազան, Խմբապետ Թովթով, Եամախ Սանդիմ, Որկրամոլ Սիսակ և Պախալ Արմենակ: Նախագահ Դարտակափոր ազան ատենանը բացաւ հետեւեալ ատենախօսութեամբ:

— Պարոն ազաներ, մալիւմ տէվլէթնիդ է ուր՝ ընցած իրիկուն, մեր կօբսօթին Թովթովմ մահուտ կատու կաթնավեր Խուլին հետ միւճատէլէ միտնեցեր է պարոն Քէմալին խէյֆէն, վէ ըսեր է ուր՝ կօմիտէն մահ պէ մահ անոր թէէտլի: արած թախսիսաթը կըյրիլուն սէպէպովը հըմայեկս էլեր կոյկոյճիութան ուսուլին ու զայտէին մուշայիր անոր դէմ հարֆէնտալութիւն կանէ վէ . . .

Սանդիմ. (ընդմիջելով) — Խօսք տուլեմ, սո՛ւտ է մի ըսեր:

Նախ. — Ծանդ կըյրէ՛ Եամախ պէկ. կէնէ խօրաթախ պօչը բերանս մի ձգեր: Խաթմի քէլամ ընեկէս սըլըա նէօպէթդ գայ իսէ՛ ուղածիդ չափ կուլա:

— Եղբայր, խօսողները մի՛ ընդմիջէք. շարունակեցէք Դարտակափոր աղա:

— Վախիտէ ատ կատու կաթնավեր շան տըղուն ըրածը նամքէօրութիւն մին էր իսէ տէ՛ էֆէնտըմ, ի՞նչ պէտքաւորութիւն կայ ատանկ թախըմ մի էսրարները խէյֆէներուն մէջ թէլլալի տալ:

— Բայց ճշմարտութիւն մըն էր որ ըսի:

— Եղբայր, ճշմարտութիւն է, այո՛, բայց պէտք է մտածէք որ, խօյները՝ ձեր այդ յայտարարութենէն կ'եղրակայեն թէ, կօմիտէն իր հաւաքած դրամները մաս մըն ալ մեզի պէս կարդ մը կոյկոյճիներու կը յատկացնէ:

— Էյ, խօսքը մէջերնիս, անանկ չէ՞ մի ե՛ա:

— Անանկ է ըմմա՛ մեր էնթէուսն ու թիճարէթը սէքթէտար չանելու. հըմար անանկ չէ՛ տի ըսինք: Պինաէն ուլէյն, կօբսօթին Թովթովմ, բամմանքնիդ սո խուսուսին մէջ ճիվ հախսուղ էք վէ հախսուղութան իլամը տի հագնիք: Ազաներ, ձեր էֆքեարը ինչ է:

Ամենքը, բացի Թովթովմէ — Այո՛, Պ. Թովթովմ, անիրաւ էք եւ պարսաւելի:

Թովմ. — Բայց կը բողոքեմ:

— Քու բողոքը ի՞նչ ճիվերս է. մէյլիւու խարարը խարար է, իսթինաֆ չի վերցնիր. թափէն մի՞նչ եղած մեծաւորներնիս ալ ատ զայտէով չե՞նքալեր մի եա՛:

— Բայց անգամ մը ինձ մօտիկ ըրէք:

— Չենք ըներ:

— Բայց ասիկա բացարձակ բռնապետութիւն է: Ես ինքզինքս պիտի կրնամ արդարացնել թողէ՛ք որ խօսիմ:

— Էֆէնտըմ, կրնաս խօսիլ ըմմա, ըսիլքներդ քեանիւնիմ եէօքիւն հէօքմով տի մնալ մեր խարարին քով. մէյլիւուտն տուած իլամը ֆէսիս չըլնիր. ասի դիտցիր տէ՛ հըմայեկս հրամմէ՛ ու խօսէ՛:

— Պէ՛ ճանըմ, միթէ կոյկոյճիութիւն ըսելը մեր մեծաւորներուն ձեռն ճերմակ, ճերմակին ալ սեւ ըսելները հաւատարմաբար ասդին անդին տարա:

ձայնել ու անոնց ամեն խօսքին իբր երկնային պատգամ իրաւացի ըլլալը անոր ասոր հաւտացնելու աշխատիլ ըսել չէ՞:

—Այո, այ՛ պէս է.

—Աւրեմն ես ալ մեր մեծաւորին ընթացքին հետեւելով իմ կօյկօյճիական պարտականութիւնս կատարած եղայ.

—Ի՞նչպէս:

—Անցածները մեր պարօն մեծաւորը խել մը անձանց ներկայութեանը խուլը մատնանիչ ընելով յայտարարած է որ՝ կօմիտէն 1000 ֆրանք տուած է եղեր անոր: Հետեւաբար, ժողովուրդը իմ ըսելէն շատ առաջ եղբայրացուցած էր որ հաւաքուած դրամներէն մէկ մասն ալ առողին կապին կը խարճուի կոր: Հիմա ասոր ինչ պիտի ըսէք Դարտակ փոր ապա:

—Էֆէնտըմ, էկէր ուր վերապայլական մեծաւոր ազանիս ճիտտէն ատանկ չարքուխ բան մի ըսելու ճիւրաթ արեր է իսէ՛ տի ըսիմ ուր՝ ադ մարդը արթըն շաշուրմիչ է արեր վէ ըրածն ու թողածը չը գիտեր. քիւնչիւմ.առ իֆատէյովը՝ պինթ էռաջ իր ետխան հալխուն ձեռքը կուտայ վէ մեզի պէս կօյկօյճիներուն թախսիսթ կապած ըլլալը իզբար ու իֆատէ արած կուլի. վէ աս բանն ալ խայրըրու չըլիւ իրենց հախուն.

—Այո, ըսած է խուլը 1000 ֆրանք առած է եղեր.

—Անդին ապ ին վաղվախութիւն ընելուն սէպէ պով միւթէֆէրիգա մ, սարիֆաթի հրմար չըլլայ ադ փարան:

—Չէ՛, չէ՛, մասրաֆի համար տրուած փարան իբր յանցանք մարդու երեսի չի զարնուիր:

—Աղէկ ա՛, ադ խուլը ըրիչ մը սպաննած է որ 1000 ֆրանք կառնէ կոր:

—Ամառ վախիթ ըլլայ նէ՛ իրեդ հարուր հատն ալ տրնայ սպաններ:

—Եղբայր, ես առտոր ժամանակուան կօյկօյճիութեամբս անոր չափ առած չեմ.

—Էրկան մ՛ըներ. դուն ալ ամսէ ամիս պառկած օտայիդ քիրան կառնես կոր:

—Ամսական 4 ֆրանքով 2 տարուան մէջ 1000 ֆրանք առած կըլլամ:

—Էֆէնտըմ, մենք՝ սնտուկին փորին քշած վախիթին հատնք, ժամանակին առնողը առեր ծախսողը ծախեր է:

—Հիմա ես նորէն անիրաւ եւ պարսաւելի՞ եմ, քանի որ մեծաւորին ինձմէ առաջ այս զաղտնիքը երեան հանած ըլլալը հաստատեցի:

—Աղէկ կըսէս ըմմա, մատէմ քի մէյլիւսը, պինթ էռաջ, իթիֆադը արայըլա քու հախսուղութանդ վէ թէլպիսութանդ խարարը տուաւ, խարարնիս խարար է, իոթինաֆ թէմեիւզ չի վերցնիր. աս խարարէն ետքը հախու պիլէ էլլաւ իսէ՛ հախսուղ ես վէստէլամ:

—Անանկ է նէ՛ թքել եմ՝ ես ձեր այդ խարա-

րին ալ մէջը չուվալին ալ—, կըսէ Պ. Թօմթօմ ու բարկութեամբ կառնէ կը քալէ, որուն կը հետեւին միւսները: Նախագահ Դարտակփոր ալան ալ կազը կը մարէ ու ըստ սովորութեան «Ընկալ քաղցրիւթեամբը» մրթմրթելով անկողին կը մտնէ:

Ապահովագրական ընկերութեան մը գրասենեակին մէջ.

—Պարոն Տնօրէն, կ'ուզեմ տունս ապահովագրել 30,000 ֆրանքի համար.

—Շատ աղէկ պարոն.

—Եւ ինչ պէտք է ընել:


—Օրինական տուրքը վճարելու էք.

—Վճարելէս ետքը 30,000 ֆրանքի ապահովագրած պիտի ըլլամ.

—Այո, ալ պիտի կրնաք հանգիստ ըլլալ:

—Իայց եթէ երբէք վաղը սուտու տունս այրելու ըլլայ, ի՞նչ պիտի առնեմ.

—Էրեք տարուան բանտարկութեան փառաւոր իղա՛մ մը:



ՀԵՌԱԳՐԱԿԱՆ (ԱժՈՒՆ ԲՈԺՈԺԻԿ ԵՒ ԸՆԿ.)

Քամաթբա

Տեղւոյ շաղիլին վրայ ճոխ կոչուած մօյոզի մը երջնքնքն պէլէտիլէլ՝ շնորհիւ մաքրուեցաւ:

Աւելցաւ Զարգաթաթճի

Հինգ շաբթի օրը երկու կօյկօյճիներ իւրօրին գինեատունը նստած՝ դանկերնէն ծեծելով հայհոյալից յօգուած մը խմբադրեցին խափալէզիին հասցնելու համար:

Աւելցաւ Բօթբօթ

Մանջ-աղջ կեան փարժարանին փոքրիկ ուսանողները՝ գպրացին մէջ օրիորդներուն ու միւս սիւներուն իրարու հանդէպ ինչ խըշախ քօմալիմանթներ և ինչ զօղլու տեսնուինքներ սարքէնուն քաղիսնիքը սկսան ընել. . . տուներու մէջ:

ՀԱՅԵԼԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ա՝ Պ. Ս. Բ. ի Ֆիլիպէ. — «Հայրիկի 164րդ թուոյն մէջ ձեր մասին ոչինչ գրուած չը կայ: Կ'սպասենք ձեր ծիծաղելի սպասնալիքի ել բին:

Մարիճա գետ. «Ակնարկուած ուշակեցիքն եղբայրքին»

—Ասանկ խնդիրներու մէջ ճշմարտութիւնը խոստովանող մը՝ ամենալով իր անունը չը ծածկեր, այլ յայտնի համարձակ հրապարակ կուգայ: Չէր եղորթ(?) մասին գրուածը իրողութիւն է, կարկտան չը վերցնիր:

Բոթ. — Աւրիշ բան է որ խաբէր համար հօւմ հաւն ալ կը մարտուի պաւթօնն ալ, որ ամեն ստամբսի գործ չէ:

Отговорникъ Ж. ИВ. ЖЕКОВЪ
Печатница „Взаимность“ — Варна.